



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1526

1527

83 - 3
4 - 15

№ 32

Գ. ՎԱՂԳՆԵՐ

1528

1529

ՀԱՒԱՏԱՐԻՄ ՍԱՎԻՏՐԻՆ

ԵՕՀԱՆՆԱ ՍՊԻՐԻ

ՈՒՌԵՆՑ ՅՈՎՍԷՓ

ՄԱԲՈ ՌՕԶԵՆԶԱՅՆ

ՆԱԽԻ ՓՈՔՐԱԽՈՐԸ

ԿՍՄ

ՊԱՏՈՒԻՐ ՀՕՐԳ ԵՒ ՄՕՐԳ

ՓԵՐԴԻՆԱՆԴ ՀՄԻԴՏ

ՆԱԼ ԵՒ ԴԱՄԱՅԵԱՆԹԻ

ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌԱԿ

2011

Հրատ. Թիֆլ. Ընկեր. հայերէն զրքերի հրատարակութեան

83-3

№ 32

9072

4-15 uy

Դ. ՎԱԼԴԵՆԵՐ

ՀԱՒԱՏԱՐԻՄ ՍԱՎԻՏՐԻՆ

1002
6026
21

Հ. Դ. ՎԱԼԴԵՆԵՐ



Գերմաներէնից Թարգմանեց

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԹԻՖԼԻՉ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԲԵԼԵՐ ՓՈՂՈՑ, № 1, 2.

1891

Дозволено цензурою. 19 Марта, 1891 г. Тифлисъ



Тип. И. Мартиросянца, Орб. ул., д. 1/2.



ՀԱՒԱՏԱՐԻՄ ՍԱՎԵՏՐԻՆ

ՍԱՎԵՏՐԱՆԻ ԵՓՐԵՄ ԵԱՐ.
ԵՄՏԱՐԵԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՀԱՅՈՑ ԱԶԱ
1. ԵՊԻՓՐԵՄ ԵՊՍԶՐԻՆ ՏԱՐԵԳՐԱԲԻՆ
28 ՄԱՅԻՍԻ 1919 թ.

Մաղրասի Ասվապարի թագաւորը իւր բո-
լոր ժողովրդին սիրելի, արդար և իմաստուն իշ-
խան էր: Նա վաղուց արդէն երջանիկ կեանք
էր վարում իւր պատուական կնոջ հետ, բայց
երբեմն աչդ երջանկութիւնը պղտորվում էր մի
փափագով, որ կարճես թէ միշտ անկատար
պիտի մնար:

Արքայական ամուսնուն անդաւակ էին.
ներանց պալատի սրահները չէին թնդում կայ-
տառ ու ժիր մանուկների ծիծաղից, զուարթ
զուարթ խաղերից:

Թագաւորը տրտում էր չտեսնելով իւր կրշ-
տին մի առույգ որդի, որ կարողանար ժամա-
նակով նրա ժողովուրդը կառավարել. տրտում
էր և թագուհին, չտեսնելով իւր շուրջը սի-
րուն սիրուն դստրիկներ:

20 03

Ասփապարին շատ և շատ նուէրներ ձօնեց աստուածներին, շատ ու շատ տաճարներ զնաց ուխտ անելու. սակայն տարիները սահում էին, և նրա տունն առաջուայ պէս դատարկ էր մնում:

Մի օր նա մտաւ Զագերնաուտի սրբավայրը և ջերմ մաղթանք անելով՝ ծուներ չոքեց սեղանի առջև, որի վրայից անոյշ բորբուսներ էր վերասլանում:

— Միամիտ կաց, Ասփապարի, հնչեց յանկարծ մի մեղմ ձայն. աղաչանքդ լսուած է:

Ապշած թագաւորը հէնց որ աչքերը վերցրեց, մի տարուբերուող պայծառ տեսիլ նշմարեց, որ շողշողուն արևի նման փայլ էր տալիս օդի մէջ:

— Մի վախենար, ասաց տեսիլը. ես Սավիտրին եմ, որ բնակվում եմ գոհերից. գոյորշացող բուրման մէջ և լսում եմ մարդկանց պաղատանքը: Ես գորովեցայ քո աղերսից. ուստի սաւառներով թռայ տիեզերքի Արարչի մօտ և հասցրի քո աղօթքը նրա զահին: Եւ նա հաճեցաւ սրտիդ փափագը կատարել: Գու և՛ ունենաս մի զաւակ, բայց դա աղջիկ կըլինի. գոհ եղիր աստուածների այդ պարգևով: Աղջիկը կըզարգանայ և սիրոյ գիցուհու՝ մայր Կավասի նման գեղեցիկ ու շնորհալի կըդառնայ: Հոգիդ կըբերկրի նրանով:

Այսպէս խօսեց Սավիտրի և անհետացաւ:

Թագաւորն երկար չըմնաց տաճարում և վերադարձաւ իւր Մադրասի պալատը: Ապաստւորներն և նաժիշտները ցնծալով աւետիս տուին նրան, թէ Ուրախացի՛ր, տէր արքայ. աչքդ լոյս — աստուածները քեզ աղջիկ են պարգևել:

Գորոված թագաւորը կռացաւ ննջող մանկան որորանի վրայ: — Սավիտրիի զթուլթեամբ շնորհուեցար դու ինձ այս օր. Սավիտրի լինի անմենդ, զոչեց նա:

Անցան գնացին տարիներ. մանկիկը մի հրաշաղեղ օրիորդ դարձաւ, ինչպէս որ գուշակել էր Սավիտրին:

— Աստուածները մի երկնային կնիք են դրոշմել նրա ճակատին, ասում էր պառաւ դայեակը. նա հասարակ աղջիկ չէ:

— Նման չէ ուրիշներին, կրկնում էին ամենքը, երբ նա քաղցրաժպիտ ողջոյն տալով անց էր կենում փողոցներից, այց էր անում աղքատներին, սիրտն էր տալիս թշուառներին. այդ միջոցին, հիւանդը մոռանում էր իւր ցաւը, վշտակիւրն՝ իւր վիշտը:

— Նրանից գեղեցիկ օրիորդ չկայ, ասում էին աղջիկներ տեսնելու համար Մադրասի գնացող երիտասարդ իշխանները, երբ նա շքեղ զարդարուած անց էր կենում հօր պալատի

սրահները և սիրուն ժպտով ողջոյն տալիս հիւրերին:

— Գեղեցկութեամբ, շէնք ու շնորհքով անմահներին հաւասար է, կրկնում էին իշխաններն և ոչ ոք չէր համարձակվում մօտենալ նրան՝ որ և է փափագ կամ ցանկութիւն յայտնելու: — Նա միւս մարդկանց չէ նմանում, ասում էին նրանք մէկ մէկու:

Ծերացող հօր սիրտը միանգամայն նուիրուած էր աղջկան. սա էր նրա միակ սփոփանքը՝ մտնաւորն ա՛յն օրից, երբ վախճանել էր թաղուհին: Նա ցաւում էր միայն, որ Սավիտրին մինչև այժմ ոչ մի փեսայ չէր ընտրել: Սավիտրին, ինքը միշտ զուարթ լինելով, հօր վիշտը չէր նկատում: Ուրախալի տօները ու խաղերը չէին նա վազելով պարտէզ էր գնում և սիրով ականջ դնում թռչունների երգերին և և կամ թէ փնջեր քաղում աստուածների ձօնելու համար:

— Սավիտրի, հոգեակ իմ, ասաց մի օր թագաւորն իւր աղջկան, երբ սա վարդի փունջ էր տալիս նրան, — ծերութիւնս արագ արագ մօտենում է: Ես որ մեռնեմ, դու մենակ, անօգնական կըմնաս. այս պատճառով ժամանակ է, որ դու փեսայ ընտրէիր և այս հոգսերից ազատէիր իմ սիրտը:

— Հայրիկ, լաւ չէ՞ որ ես քեզ մօտ մնամ, ասաց օրիորդը խնդալով. անփութ եղիր իմ մասին, ես մենակ չեմ: Քանի որ ես վայելում եմ արևի լոյսն ու ծաղիկների բուրմունքը, անտառի սօսափունն ու թռչունների դայլայլիկը, — ես բոլորովին երջանիկ եմ, — մանաւանդ որ սէրդ էլ ինձնից անպակաս է, ո՞վ հայրիկ: Սակայն, շարունակեց նա, նայելով հօր տխրահայեաց աչքերին, — սակայն եթէ կամենաս՝ ես պատրաստ եմ ցանկութիւնդ կատարել և հետևել քո ընտրած տղամարդուն:

Հայրը հաւանութեան նշան տուաւ:

— Բայց չէ՛, ասաց նա փոքր ինչ յետոյ. եկ դու ինքդ ընտրութիւն արա: Վաղն ես կառք լծել կըտամ. դու կ'երթաս հաւատարիմ շքադիրներով, երկրէ երկիր ման կըգաս և ո՞ւմ որ արժանի դատես, նրան էլ քեզ փեսայ կընտրես: Հաւանածդ ո՞վ էլ լինի, միայն թէ ազնիւ ու բարի լինի, ես նրան սիրով կ'ընդունեմ:

2.

Հայրը համբուրեց դստեր ճակատը, և Սավիտրին անտառ գնաց: Անտառը նրա սիրելին էր, նրա մանկութեան ընկերը: Նա շատ էր խաղացել այդ անտառի ստուերներում, շատ

անգամ էր ծաղիկ քաղել և զանազան կենդանիներ ճանաչել, որոնք անվախ հետևում էին նրա ձայնին: Ստէպ նա ժամերով մենակ էր մնում ամենախիտ թաւուտներում: Այդ բոլորը տան մարդիկը գիտէին, և նրանք անհոգ էին աղջկայ մասին, կարծելով թէ նա ազատ կը մնայ փորձանքից:

Այս օր էլ նա վազելով ստուերամած անտառը մտաւ և մի պերճ արմաւենու տակ նստաւ: Ահա ցատկելով նրա մօտ եկան անտառի կենդանիները՝ երկչոտ նապաստակը, վիթը, սկիւռը, հպարտ սիրամարդը, գոյնզգոյն թուլթալներն և անպաճոյճ թռչունները: Գրանք բոլորն էլ շրջապատեցին աղջկան, նրա ոտքերի տակ նստան և կամ ուտերի վրայ թառեցան: Սավիտրին ծիծաղելով թոյլ էր տալիս որ մօտենան, երեխայի պէս խօսում էր նրանց հետ, գզւում էր երկչոտներին, և անբան էակներն այն աստիճան հլու էին նրան, որ կարծես թէ նրա ամեն մի խօսքը հասկանալիս լինէին:

Բայց լանկարձ նրանք հուշտ լինելով դէս ու դէն փախան. Սավիտրին ապշած շուրջ նայեց և սրտաթափ վեր թռաւ: Թաւուտի միջից մի մարդու պատկեր դուրս սողաց, որ անքթիթ նրան էր նայում սև աչքերով: Սա-

վիտրին դեռ երբէք մարդկային էակ չէր տեսած անտառի մենութեան մէջ:

—Մի վախենար, Սավիտրի, առաջ իսկոյն անծանօթը. ես մի հասարակ ճգնաւոր եմ, որ աշխարհից հեռացած՝ պաշտում եմ աստուածներին: Ես դիտում էի քեզ անտառաբնակ ընկերներիդ շրջանում և չկարողացայ ընդգիմանալ դէթ մի անգամ քեզ հետ խօսելու փափաղիս:

—Միթէ ինձ ճանաչում ես, հարցրեց Սավիտրին զարմանքով: Մինչև այժմ ոչ մի անգամ չեմ տեսել քեզ: Ո՞վ ես դու և ի՞նչ ես պտրում այս լռիկ անտառում, ուր ինձ երբէք ո՞ր և է մարդ չէ հանդիպած:

—Ես ո՞վ եմ, կրկնեց օտարը, և նրա ձայնըն օրիորդի սիրտը շարժեց: Կարժամանակ, որ տնունս մի պանծալի հռչակ ունէր,—այլ ևս չունի: Իմ հայրենիքը անտառն է, վիճակս է—առանձնութիւն: Ես անց էի կացնում օրերս ճգնողների հետ միասին աղօթք անելով աստուածներին, խնամում էի պառաւ մօրս, օգնում էի կոյր հօրս և դուհ էի այս կեանքից, մինչև որ...

Նա լռեց մի վայրկեան և ապա թէ շառունակեց, ասես թէ մի բան լիշելով.—Ես քեզ վաղուց ճանաչում եմ: Ո՞վ չգիտէ չնաշխարհիկ

Սավիտրի իշխանուհուն: Ղատ անգամ տեսել եմ քեզ ծաղիկների միջև զբօսելիս: Գուռ ման էիր գալիս քեզ նման սիրուն վարդեր քաղելով, և ես հեռուից դիտում էի քեզ, որ ազատ մնաս վտանգներից. բայց դու ինձ չէիր նկատում:

— Ես չեմ վախենում վտանգներից, ասաց Սավիտրին ժպտալով. ինձ ոչ մարդիկ կարող են վնասել, ոչ էլ վայրի զազանները: Անտառի վայրագ իշխանը հետևում է իմ կոչին, մինչև անգամ կատաղի վազրը ոչ մի վտանգ չէ սպառնում ինձ: Հօրս ասելով՝ ես ՚ի բնէ ընդունակ եմ նրանց սանձելու: Հէնց որ ես տաղտուկ եմ զգում մեր պալատի աղմկալից հրճուանքներից, — գալիս եմ այս անշշունջ անտառի մէջ հանգստութիւն գտնելու: Եւ սա ամալի չէ թւում ինձ: Ծառերը, ծաղիկները, թռչունները միշտ ինձ հետ խօսակցում են, և ես ամենքին հասկանում եմ: Ահա նալիր այն հաստաբուն ծեր կաղնուն. նրա տերևները սօսափում են զեփիւռից, և նա մեղմիկ մըմընջում է.

«Արդէն հազար տարի է, որ ես կանգնած եմ այս տեղ: Քամիները փչում են, տերևներս ու ոստերս շառաչում. բազմաթիւ սերունդներ սահել անցել են իմ առջևից: Մարդ կարծում է, թէ ամեն բան անցաւոր է. բայց Արարիչն

ու տիեզերքը յաւիտեան կան և վախճան չունին: Ամեն մի ժամ փառք տուր Վեհին և ուսիր Նրանից, թէ ի՞նչ ասել է յաւիտեանքը»:

— Այգպէս է խօսում միշտ կաղնին, շաբունակեց, Սավիտրին. սակայն զիտես, թէ ի՞նչ է ասում այն երկնաբերձ նուրբ սօսին: Ականջ դիր ինձ, թարգմանեմ.

«Վեհ Բրահմայի հրամանով՝ անտառների արքայի պէս բարձրանում եմ ես գետնից. և երբ բնութիւնը օրհնում է իւր Արարչին, ամենից շուտ իմ ձայնն է հասնում Նրան. ես ամենից մօտ եմ Նրան. իմ գաղաթն այնքան բարձր է, որ ես երկնային լուսոյ ոսկեծոյլ դրոշներն անգամ տեսնում եմ»:

— Եւ դարձեալ մի բան կ'ասեմ քեզ, յարեց Սավիտրին. հապա մի տես այն փոքրիկ ծաղիկը, որի բաժակից այնպիսի անուշ բուրմունք է տարածվում. նա էլ ունի Արարչին փառաբանելու եղանակը: Նա երգում է.

«Երբ որ Բրահմայի հօր կամքով ես կեանք ստացայ, Նա իմ փոքրիկ բաժակը քնքուշ բուրմամբ լեցրեց: — Սփռիր դրան եթերքի մէջ, ասաց նա, վերառաքի իբրեւ օրհնութիւն Բարձրեալին, և թող այդ բուրմունքը երկնքի լուսապայծառ դռնովն անցնի»:

— Այոպէս ահա ամեն մի իր, ամեն մի

ծառ, ամեն ծաղիկ իւր երգն ունի, որով օրհնում է Ստեղծողին. միայն մարդն է մոռացկոտ, մինչդեռ նա էլ պիտի ձայնակցէր բնութեան վսեմ դաշնակին: Ամենաքաղցր երգիչները հարկաւ սիրուն թռչնիկներն են, որոնք հիւսիսային սառն օդից փախչելով՝ մեզ մօտ են պատսպարուել: Նրանք լիշում են կարօտով իրենց հեռաւոր հայրենիքը, որտեղից որ չուել են, ուր որ բոյներ ունին թողած և ուր դարձեալ պիտի զնան՝ հէնց որ լսեն, թէ այնտեղի անտառներն ու դաշտերը արդէն սկսել են կանանչ գոյնով զարդարուիլ: Ես կարող էի և ուրիշ բաներ պատմել քեզ, բայց այսքանն էլ բաւական է՝ ցոյց տալու համար, որ ես մենակութիւն ու վախ չեմ զգում անտառիս մէջ, ուր ամեն բան ինձ խօսակից է:

Անձանօթը լուռ ականջ էր դնում օրիորդին և մտամոլոր կանգնած էր: Աղջկը նորից շարունակեց.

— Դիշերը մօտենում է, արդէն ժամանակ է թողնելու այս գեղեցիկ անտառը: Արդեօք չե՞ս կամենալ ուղեկցիլ ինձ, ո՞վ անձանօթ:

Անձանօթը դուչեց.

— Այո, ես ուզում եմ ուղեկցիլ քեզ: Ո՛հ, դու երջանիկ էակ ես. աստուածները օժտել են քեզ զարմանալի ձիրքերով. դու լսում ու տես-

նում ես, ինչ որ ծածկուած է ուրիշներից: Նրանք արագ յառաջ գնացին մի շաւղով, որի երկու կողմից պսպլում ու փայլում էին անթիւ լույսեր:

— Ճանաչո՞ւմ ես այս շողշողուն աստղիկները, հարցրեց Սավիտրին:

— Մենք դրանց փոքրիկ լապտեր ենք անուանում, ասաց օտարը ժպտալով, և դրանք լոյս են տալիս մեր շաւղին:

— Այդպէս էլ է, հաստատեց օրիորդը: Մարդիկ կարծում են, թէ դրանք լուսաւոր բզեզներ են. բայց ես աւելի լաւ եմ տեղեակ այդ բանին: Մի ժամանակ դրանք միւս բիւրաւոր աստղերի հետ ցօլում էին երկնքում. Սակայն նրանց ճաճանչը շատ թույլ էր և կորչում էր միւս բոյլերի շողման մէջ: Մի անգամ նրանք մեր հոյակապ երկրի վրայ վայր նայելով՝ ասացին տիեզերքի բարի հօրը. «Թույլ տուր մեզ գետին իջնել, որպէս զի գիշերները լոյս տանք մարդկանց»: Բարի հայրը նրանց խնդիրն ընդունեց, թէև նկատեց. «Չատ նեղութիւն կը հասնի ձեզ նրանցից, որոնց որ կամենում էք ծառայել»: Եւ նրանք իսկոյն թեւատարած վայր իջան: Այն օրից սկսած աշխատում են ծառայել մեզ իրենց լուսով. սակայն մարդիկ շատ կոպիտ են վարվում նրանց հետ — զարդի տեղ

են դործ ածում նրանց, իրենց մաղերի մէջ են
ցցում և առ հասարակ չեն խնայում խեղճերին:

Այսպէս խօսելով յառաջ էր գնում Սավիտ-
րին. անձանօթն էլ հետը գնաց մինչև պար-
տէզի դռնակը: Այս տեղ նա կանգ առաւ:

— Բաժանուելու ժամանակ է, ասաց նա.
իմ ճանապարհը դեռ երկար է:

— Միթէ հօրս տունը չի մտնիլ, նկատեց
օրիորդը: Ասա՛ անունդ, որ մենք էլ արժանա-
պէս մեծարենք քեզ:

— Սատիւական ճգնաւորի համար օթեկան
չկայ թաղաւորի ապարանքում, պատասխանեց
անձանօթը: Ես պիտի գնամ ալւոր ծնողնե-
րիս մօտ, որոնք սպասում են ինձ կարօտով:
Մնաս բարով. լիշիր մենաւորիս, եթէ այդ քեզ
հաճոյ թուի: Իմ անտառն ու տունը ամայի ու
տխուր են, որովհետև կեանքիս շաւղի վրայ ոչ
մի լոյս չէ փայլում: Այո, թէև ես տեսայ մի
լոյս, որ աստղի պէս շողաց ինձ, բայց—ափսոս
— ես չեմ կարող բռնել նրան. նա չի ուզիլ
մտնել իմ չքաւոր յարկի տակ և կրմարի կա-
րիքից: Բարով մնաս:

Եւ առանց պատասխանի սպասելու՝ մարդն
արագ անհետացաւ թիւրի մէջ: Սավիտրին եր-
կար նայեց նրա ետևից և ապա թէ մտամոլոր
ներս մտաւ:

3.

Միւս օրը նա հօր կամքին հնազանդելով չուեց
հեռաւոր երկիրներ. նա տեսաւ շէն քաղաք-
ներ, վեհապետների պալատներ, և ամեն տեղ
սիրով պատուով ընդունուեցաւ: Նա գնաց և
սուրբ մենակեացների ճգնարանը, որոնք ջերմ
աղօթքով ու խիստ պահքով պաշտում էին աս-
տուածներին, որպէս զի արժանանան Բրահմա-
յի արքայութեան:

Այսպէս անցան օրեր, շաբաթներ, ամիս-
ներ, մինչև որ Սավիտրին յետ եկաւ: Հայրը
խնդութեամբ ընդունեց նրան:

— Հայրիկ, ասաց աղջիկը, ես շատ բան
ունիմ պատմելու քեզ և յոսով եմ, որ հաճու-
թեամբ կրլսես:

— Ուրեմն հասա՛ր բաղձանքիդ, գտա՛ր, ում
որ պտրում էիր, մտածեց թաղաւորը, յօժա-
րութեան նշան տալով. դէ, պատմիր, լսեմ:

— Այո, պատասխանեց Սավիտրին. ես նրան
գտել էի՝ դեռ այստեղից չըմեկնած: Մի՛ զարմա-
նար այս բանի վրայ և ականջ դիր խօսքերիս:

Եւ աղջիկը պատմեց հօրը, թէ ինչպէս իւր
չուելուց մի զիշեր առաջ, անտառի մէջ, մի ան-
ձանօթ մարդ էր տեսել, որ Սատիւական ճգնա-
ւոր էր անուանում իրեն:

— Հայրիկ, շարունակեց աղջիկը, ես չկարողացայ մոռանալ այն տրտում հայեացքը, որ նա շանթել էր սրտիս մէջ, — մոռանալ նրա տխուր հառաչանքը: Նրա պատկերն էր, որ հալածում էր ինձ ուղեւորութեանս միջոցին: Ուր որ գնում էի, միշտ նրան էի որոնում. նրա գունատ դէմքն ու վառվառն աչքերն անբաժան էին ինձանից: Ես զգում եմ, որ ես կոչուած եմ նրա կեանքը պահպանելու, նրան երջանիկ անելու: Հարցնում ես, թէ ով է նա և ո՞ր տեղի բնակիչ: Նա պարում է Մէղիաշի անտառում մի առանձին տնակի մէջ, իւր ալեւոր Դիւմադէնա հօր հետ միասին, որ երբեմն պերճ ու զօրեղ թագաւոր էր Սալվա կոչուած աշխարհում: Այն տեղ է բնակում և իւր մայրը: Նա դեռ անչափահաս պատանի է եղել, երբ որ հայրը կուրացել է և աւագակները նրա պետութեան վրայ յարձակուելով՝ չարաչար արտաքսել են հիւանդ արքային ու թագուհուն: Կոյր արքան ապաստան է գտել բարեպաշտ ճգնաւորների շրջանում. այն տեղ է գտնուում և Սատիավանը՝ ծնողներին խնամելով, և ամենքը սիրում են նրան իւր առաքելի բարքի համար: Նա գոհ էր իւր վիճակից մինչև ինձ տեսնելն ու զգալը, որ դու չես յօժարիլ հեռացնել ինձ մեր պալատից, ուր սովորած եմ ա-

ռատութեան ու ճոխութեան մէջ: Ես միջոցին նա առաջին անգամ մտաբերեցի իւր կորցրած պետութիւնն և զայրութեամբ կշտամբեց իրեն, որ երջանկութեան ժամանակ մոռացել էր աստուածներին: Իսկ ես նրան ասացի. Ես նորից քեզ մօտ կըգամ և էլ երբեք չեմ բաժանուիլ քեզանից: Մի կարծիր, որ ես մեղի ու փափուկ աղջիկ եմ. ես չեմ վախենում աղքատ կեանքից, որ մեր փրկութեան նպաստաւոր է: — Հայրիկ, կնքեց պաղատելով Սափիտրին, թող տուր՝ խօսքս կատարեմ, նրա կեանքը զուարթացնող լոյս դառնամ: Ես նրան եմ ինձ փեսայ ընտրում, ոչ ուրիշին — թող վկայ լինին աստուածները...

— Լուր, Սափիտրի, այդ խօսքերդ յանդուգն են, ընդմիջեց յանկարծ մի օտար ձայն:

Թագաւորն ու աղջիկը սարսափելով նշմարեցին մի ծեր մարդ, որ ներս մտաւ նոյն բոպէին: Նրա մօրուքն արծաթի պէս սպիտակ էր, հագուստն ու ձեռին բռնած գաւազանը՝ ձիւնափայլ:

— Ես ճանաչում եմ դրան, շշնջեց թագաւորը. դա Նաւադան է՝ աստուածների դեսպանը:

— Ես իրօք Նաւադան եմ, պատասխանեց ալեւորը, և առաքուած եմ աստուածներից Սափալինէր, Հաւատ. Սափիտրին:

վիտրինի մօտ: Այն աղջիկ, մին ուզիր այնպիսի բան, ինչ որ քեզ չարիք է սպառնում. շատերի նման բախտ մի ստիրի այն տեղ, ուր որ երբէք գտնելու չես: Երդարև Սատիւականն առաքելն է և գէմքով էլ գեղեցիկ. սակայն իմացիր, որ նրան սահմանուած է շատ կարճատև կեանք վայելել երկրի վրայ: Այլ ևս շատ շատ՝ մի տարի կ'ապրի նա. այնուհետև Եսման կըտանէ նրան իւր աշխարհը՝ այդ է հօր ձիւկայի վճիռը, ձիւկայի, որին ատելի են Բրահմանի ստեղծած գեղատեսիլ մարդիկը: Ուստի կեանքդ դառն ու սղաւոր կըլինի, եթէ դու Սատիւականին մարդու գնաս:

— Խօսք եմ տուել, և սրտիս ուղածը միայն նա է, պատասխանեց Սատիւարին. թող աստուածներն ինչ էլ կամենան՝ անեն ինձ: Չէ որ նրանք են այս սէրն իմ սրտիս մէջ բորբոքել:

— Մոռացիր այդ սէրը, դատրիկ իմ, ասաց Նսվապարին: Նաւադաշի խօսքերն ապագայիդ հայելին են. մարդ իւր կամքով չէ կարող շրջել աստուածների վճիռը: Եկ լսիր մեզ երկուսիս:

— Հրամանդ անկարող եմ կատարել, պատասխանեց օրիորդը: Կեանքիս անցած օրերն արևի պէս պայծառ էին. որ և է վիշտ կամ

նեղութիւն ես չեմ կրել մինչև այս օր, և ես դոհ կըլինիմ աստուածներեց և այն միակ տալուալ համար, որ շնորհելու են ինձ այլ ևս, որովհետև այդ տարին ամբողջ կեանքի արժէք ունի: Ինչ աղէտք էլ որ հասնի ինձ այնուհետև, ոչ մի տրտուհ չեմ յայտնիլ. ես նրա կեանքի լոյսը կըլինիմ և եթէ հարկը պահանջէ, կըմեռնեմ էլ նրա հետ միասին:

— Կոյտի որոշումը հաստատ է, ասաց Նաւադան: Գու խօսք ես տուել, ով թաղաւոր, որ աղջիկդ ում ուզենայ, նրան ընտրէ: Ուրեմն թող իւր կամքը կատարուի: Եւ դու, Սատիւարի, չմոռանաս—այս օրուանց՝ միայն մի տարի... Ողջիք արա և զոհեր բեր, բայց չլինի թէ դանդատուիս... Բարով մնաք. ես եկել էի միայն պարտքս կատարելու. այժմ պիտի նորից երկինք բարձրանամ.

Մի մեղմիկ գեփիւռ հնչեց սրահում և Նաւադան անհետացաւ: Թաղաւորը հառաչելով սրտին սեղմեց աղջկան և ասաց.

— Ես չեմ ուզում ընդդիմանալ քո կամքին, միայն կըցանկայի, որ չկտոյ չըզոյճայիր:

Սատիւարին գուարթ գուարթ պատասխանեց. — Մեր առջև միայն մի տարի կայ. եկ ուրեմն շտապենք, հայրիկ:

Այդ օրից մի քանի օր որ անցաւ, մեծ խնդութիւն ու զարմանք տիրեց Մէղիալի բրահմաններին: Նրանք բոլորն էլ Մադրասի Ասկապարի թաղաւորի հրամանով հաւաքուեցան Դիւմաղէնա թաղաւորի ճգնաւրանը, ուր Ասկապարին ինքն անձամբ բերել էր իւր միաձին աղջկան՝ չնաշխարհիկ Սաւիտրիին՝ պսակելու Սատիաւան արքայորդու հետ միասին: Սովորաբար լուռ անտառում այժմ շրջում էին շքեղ կառքեր, տրոփում էին սօս երկվարներ, վազվզում էին ծառաներ. զգօն ու լուրջ բրահմանները սպիտակ սպիտակ շորեր հագած յամրաքայլ ման էին գալիս, և Ասկապարին անշուք տնակի առջև կանգնած՝ հրաժեշտի ողջօյն էր տալիս իւր աղջկան:

— Բարով մնա՛ս, դստրիկ իմ, ասաց նա. թողնում եմ քեզ ամուսնուդ վտառհելի հովանու տակ: Քաջ եղիր և հաստատ: Եւ դուք, ասաց նա, Սատիաւանին և նրա աղգականներին ղիմելով, հաւաստի եմ, որ կըսիրէք սրան, ինչպէս որ արժանի է սիրուելու:

— Դու մեզ շատ բան շնորհեցիր, պատասխանեց կոյր արքան, իւր աջը բռնող ձեռն ամուր սեղմելով, — դու մեզ տանդ պսակը պար-

գեցիր: Այսուհետեւ միայն մի որտաղին փափագ ունի իմ սիրտը, այն է՝ աչքովս տեսնել այդ փարեղի էակին, որ այժմ իմ դստրիկն է: Բայց զո՛ւր փափագ ու բաղձանք, — զո՛ւր և ունայն, ինչպէս և այն ոսկի ոսկի յոյսերը, որ ունէի երբեմն և որ սակայն ՚ի չիք դարձան... Բարով գնաս, աղնիւ իշխան. ես քեզ միշտ շնորհապարտ կըմնամ:

Ասկապարին դարձեալ մի կարճ հրաժեշտ առաւ թաղուհուց, փեսայից, էլի մի անգամ գրկեց աղջկան. յետոյ կառք նստաւ ու մեկնեցաւ: Իսկ մենաստանը նորից ընկղմեցաւ մութ անտառի լուռութեան մէջ:

Սաւիտրին այժմ իւր ցանկութեան համեմատ Սատիաւանի ամուսինն էր:

— Դու իմ կինն ես, ասաց նա, և ես պիտի խնամեմ քեզ ու վրադ հսկեմ, որ խաւար կեանքս լուսաւորող պաշտառ լոյսը չմարի:

Կինը ժպտաց ու պատասխանեց.

— Քանի որ դու ինձ հետ ես, ես քաջ ու զօրեղ կըլինիմ և ոչ մի բանից երկիւղ չեմ զգալ:

Այժմ նա հանեց իւր գայլդերն ու շքեղ զգեստները և հագաւ ճգնաւորի կոպիտ շորեր: Նա յօժար սրտով լանձն առաւ իւր նոր վիճակի պարտքերն և մարդու հետ միասին սկսաւ հոգալ ամենօրեայ պէտքերն ու նրա ծնողների

կարիքը: Նա կարճում էր ժամերը զուարթ ու կայտառ զրոյցներով, և ամենքը սերտ սիրով սիրում էին նրան: Ինչպէս որ առաջ, մինչ նա ապրում էր իւր հօր մօտ, այնպէս էլ այժմ, ուր էլ գնար՝ միայն բերկրանք էր տա-րածում:

Նրա օրերն անցնում էին անվրդով եր-ջանկութեամբ: Զարթոյններ ու ամիսներ հօլո-վեցան և տարին մօտենում էր իւր վախճանին: Այժմ չարագուշակ շշուկի պէս սպառնալով հըն-չում էին Սավիտրիի հուզու մէջ Նաւագայի խօսքերը, որոնք շուտով պիտի կատարուէին: Սավիտրին աւելի լուռ ու խուհուն դարձաւ. նա ամբողջ ժամերով նստած էր մնում մռայլ մըտ-քերի մէջ սուղուած: Բայց երբ մի օր Սատիա-վանը քնքուշ հոգածութեամբ հարցրեց նրան, թէ ի՞նչ էր պակասում նրան, արդեօք կարօ-տե՞լ էր նախկին շքին ու ճոխութեան, — կինը խնդալով բռնեց նրա աջն ու թոթովեց — Դո՛ւ ես միայն իմ ճոխութիւնն ու շուքը: Այնուհե-տեւ նորից սկսաւ զուարթ երեւնալ, և ոչ ոք չընկատեց նրա սրտի դառն վիշտը:

Այսպէս ահա մօտենում էր Սատիավանի օրհասը: Սավիտրին ուխտ անելով շարունակ երեք օր ու երեք գիշեր ամենախիստ ճգնու-թեամբ ապաշխարեց աստուածների սեղանի առ-

ջև: Նա աղերս էր մատուցանում իւր մարդու կեանքի համար: Կոյր թագաւորը, սկեսուրն ու մայրը աղաչում էին նրան դադարել այդ սառ-տիկ հսկումներից:

— Թող տուէ՛ք, որ ամենքիդ արածը ես էլ անեմ, ասում էր նա հեղութեամբ. Բրահմա-յի աչքը սիրով է նայում աղօթք անող մար-դու վրայ:

Վերջին օրհասներ օրը եկաւ. արեգակը ծագեցաւ:

— Ո՛վ արեգակ, արեգակ, մըմնջում էր Սա-վիտրին, ծածկիւր դէմքդ. ես չեմ դիմանալ քո լուսին, երբ որ ահեղ վճիռը կատարուի:

Նա այլ ևս մի անգամ բոլոր սրտով քա-ջութիւն և ոյժ խնդրեց. յետոյ հանգիստ մօ-տեցաւ իւրայիններին, և նրանք ջերմ սրտով մաղթեցին նրան, որ իւր ուխտը կատարուի: Ալեոր հայրը նրա տաք ճակատը համբուրեց: Մինչ Սավիտրին գնում էր նախաճաշի հրաւի-րելու մայրիկին, Սատիավանը մի կողմ տարաւ նրան և ասաց.

— Դու յոգնած ու գունատ ես, անձկալիդ իմ. դու որ ծագիլի պէս անմեղ ու մաքուր ես, ինչո՞ւ ես տանջվում տաժանելի պահքերով:

Կինը մտերմաբար ծիծաղեց: — Ծագիլը թող է և ամեն հողմից երեւուող. ես էլ տկար եմ—

ինձ հարկաւոր են աղօթք, հաւատք, ապաշխարանք:

Փամերը սահեցան, կէսօրն անցաւ. Սատիւփանը վերցրեց իւր դամբիւղն ու տապարը և ուղում էր անտառ գնալ:

— Թող որ ես էլ հետդ դամ, խնդրեց կինը. ես չեմ ուղում այս օր մենակ մնալ:

— Ճանապարհը երկար է, պատասխանեց Սատիւփանը. իսկ դու յոգնած ես երկարատեւ հսկումից:

— Ես յոգնած չեմ. թոյլ տուր որ քեզ հետ լինիմ. ես կ'ուզէի զբօսնել ծառերի ստուերում: Ծաղիկները կանչում են ինձ, ես նրանց վաղուց է չեմ տեսել: Մի մերժիր իմ խնդիրը. սա առաջինն է, որ լսում ես ինձանից:

— Ինձ միշտ ցանկալի է տեսնել քեզ իմ կշտին, պատասխանեց Սատիւփանը. գնանք ուրեմն միասին, եթէ ոյժդ ներում է:

Սավիտրին հրաժեշտի համբոյր տուաւ ծերերին, և ապա թէ մարդ ու կին խօսակցելով անտառ մտան: Ամբողջ անտառը բողբոջում էր ու բուրում. պճնազարդ սիրամարդները, կարապետներն ու ճայերը թռչկոտում էին օդի մէջ. դետակի ջրերը պաղպաջում էին ծառերի տակ. կապույտ լեռները բարձրանում էին հեռուից և

արեգակի շողքերը անցնում էին տերեւների միջով:

— Ի՛նչպէս ընդարձակ ու հոյակապ է բնութիւնը, ի՛նչպէս սիրուն է այս մութ կանաչ անտառը, ասաց Սատիւփանը. ինձ էլ այժմ հասկանալի է դրա երգը, յաւերժական հին երգը. դ՞ու մեկնեցիր ինձ դրա իմաստը, ո՞վ սիրելիս, և ահա դա շարունակ երջանկութիւն ու սէր է նուագում ինձ համար: Սակայն եկ փոքր ինչ հանգստանանք, ծաղիկ ու պտուղ հաւաքենք և ցախ կտրենք զոհի համար:

Սավիտրին յօժարութեան նշան տուաւ: Նա նստաւ արօտի վրայ և մօտիկից նայում էր, թէ ինչպէս մարդն ուժեղ բազկով կացին էր ճօճում ու փայտ կտրում: Նա աչքով հետևում էր մարդու ամեն շարժմունքին: Արևի տապը դեռ կիզիչ էր, տունիկերը բուրում էին և ծաղիկները մեղմիկ հովից գետնի վրայ թօթափվում: Մի թռչնիկ, ծառի ոստերի մէջ նստած, դմալական դալալիկ էր հընչեցնում:

— Ո՞վ թռչնիկ, հառաչեց Սավիտրին, արդեօք սէր ու երջանկութիւն է երգածդ: Այս օր ես անկարող եմ քո երգերը հասկանալու, արեգակը խոնարհի թէ չէ՝ իմ բախտն էլ կրմարի:

Սակայն ես չեմ ուզում տրտունջ յայտնել, ով երկնային աստուածներ, այլ միայն աղօթք և աղաչանք վերառաքել դէպի ձեզ:

Յանկարծ ծառերի զաղաթները տատանուեցան, թռչնիկը լռեց: Իսկ Սավիտրին տեղից թռաւ և կանգնեց իւր մարդու կշտին: Տապալը Սատիավանի ձեռից ընկաւ և նա ինքըն կնոջ բազկին յենուեցաւ:

— Սավիտրի, հառաչեց նա հեկեկալով, զլուսս այրվում է, թող փոքր ինչ հանգստանամ:

Սավիտրին կամաց նստաւ մամռի վրայ և մարդու խոնջ գլուխն իւր ծնկերի վրայ դրաւ:

— Հանդիստ հանդիստ քուն եղիր. սէրս արթուն է, ասաց նա:

Մարդը դարձեալ մի անգամ նայեց կնոջ երեսին և իսկոյն նիրհեց: Սավիտրին նրա գլուխը գոգում բռնած՝ անդրիի նման անշարժ ու լուռ նստած էր: Լսվում էր տերևների միօրինակ ոսոսափիւնը. հեղիկ քամին բողբոջներ ու ծաղիկների փոշի էր տեղում՝ նրանց վրայ. սսխակը դարձեալ նուազում էր ոստերի մէջ և անտառը հարբեցուցիչ բուրմունք էր սփռում Սավիտրիի չորս կողմը:

— Երկինքն արեան պէս կարմիր է, ասաց նա սարսռալով. այդ մահուան նշան է:

Նա առաջին անգամ շուրջ նայեց և տե-

սաւ կարմիր բոցով լուսաւորուած մի կերպարանք, որ կամացուկ դուրս էր գալիս մացառից: Նրա հազուստն ու զանդուրները սև էին, նրա ոտքերը գետնի վրայով սահելիս ձայն չէին հանում: Սավիտրին զդուշութեամբ փափուկ մամռի վրայ դրաւ քնած մարդու գլուխն և գնաց գիմաւորելու անծանօթին, որ նրան տեսնելուն պէս կանգ առաւ: Եկաւորի դէմքը թուխ էր ու թեթև վշտով սքողուած: Սավիտրին սկսաւ զիտել նրան: Եկաւորի սև աչքերը զիշերային խաւարով սլատած ծովի նման անփայլ էին:

— Ի՞նչ ես ուզում, Սավիտրի, ասաց նա հանդարտ ձայնով: Մի արգելիք քայլերս. դու չես կարող յետ շրջել ճակատադրի ընթացքը: Քո մարդու կեանքի ջահն արդէն հաղիւ է առկայծում և պիտի մարի վերջալուսի հետ միասին:

— Ուրեմն դու Եաման ես՝ մահուան հրեշտակը, հարցրեց Սավիտրին: Եկել ես, որ քո հեռաւոր և անծանօթ աշխարհը տանես իմ մարդուն: Չեմ բողոքում ճակատադրի վճռի դէմ. սակայն ինձ էլ հետդ առ և թող որ մահուան մէջ էլ անբաժան մնամ նրանից:

Նա ընկաւ Սատիավանի մարմնի մօտ և ամուր զրկեց նրան:

— Դու չես կարող հետևել մարդուդ, ասաց Եաման. քեզ չէ տրուած բաժանուիլ նրա

Հետ միասին երկրային վայելքներից ու վշտերից: Ես հրեշտակներ չառաքեցի այդ քարեպաշտի ետեւից, այլ ինքս եկայ: Ես նրան յուշիկ կրտանեմ մահուան խաղաղ և լուսավառ օթեւանը:

Մահուան իշխանն և՛ս տւելի մօտեցաւ մեռելագէտ Սավիտրիին. մի սառ ու թեթեւ շունչ դիպաւ նրա ճակատին, և նա ուշաթափ վալը ընկաւ: Ստեփանն թմրութիւնը կարճ տևեց. յանկաճ նա ուշքի գալով շուրջ նայեց—մահուան իշխանն այլ ևս չկար, արեւի վերջին նշույլը հանգել էր, և մարդն ընկած էր նրա առջև՝ անշարժ, անշունչ, անկենդան: Սավիտրին սասանեցաւ:—Ես կ'երթամ նրա ետեւից, գոչեց նա, կ'երթամ նրա հետ նոյն իսկ մահուան արքայութիւնը: Ո՛վ անտառաբնակ թռչուններ, ո՛վ երփներանգ ծաղիկներ—դուք տեսաք նրանց մեկնելը. ասացէք, որ ճանապարհով գնացին: Չնորհեցէք ինձ ձեր թւերը, ո՛վ փետրաւոր երգիչներ, հասցուր ինձ նրանց ետեւից, ո՛վ սրբնթաց փոթորիկ:

Թռչունները նուազում էին, հողմը շաչում էր տերեւների մէջ և նրանց ներդաշնակ սօսափունից այս խօսքերն էին դուրս թռչում.—Ոչ քամին կ'օգնէ քեզ նորից միանալ մարդուդ հետ, ոչ էլ թռչնի թւերը: Ստեփանն եթէ

կամենաս հետեւիլ նրան ամենաջերմ կարօտով, հաւատարիմ և աներկիւղ արիութեամբ,—էկ, փորձիր: Տեսնում ես այն շողափայլ լոյսը ծառերի միջև—այն կողմը գնաց մեծ Եաման: Դէ՛ շտապիր:

—Այո տեսնում եմ շողիւնը, գոչեց Սավիտրին յառաջ վազելով,—չնորհակալ եմ ձեզնից, ո՛վ բարի օգնականներ: Սրտիս կարօտը, հաւատարմութիւնս և արիութիւնս ինձ թւեր կրտան. ես կըհասնեմ նրա ետեւից:

Ճ.

Եւ նա արագ յառաջ սրացաւ, հետզհետէ իւր ընթացքը սաստկացնելով: Նա մօտեցաւ երերուող լուսին—դա էր մահուան իշխանը, որ մի ուրուական էր տանում իւր հետ: Սավիտրին ճանաչեց իւր ամուսնուն:

—Դադարիր, ո՛վ հօր աստուած, դադարիր, գոչեց նա բարձրաձայն:

Եաման կանգ առաւ և թէպէտ ապշած, բայց հանդարտ ու քաղցր ձայնով ասաց նրան.

—Իմ ոտները լուսից ու փոթորիկից էլ արագ են. ո՛վ բերաւ քեզ իմ ետեւից:

—Հաւատարիմ սիրոյ առջև գերեզման չկայ, պատասխանեց Սավիտրին. ինձ բերողը սրտիս

կարօտն է, առաջնորդողը՝ իմ պարտքը: Սրանք են, որ ոյժ տուին ինձ թռչնից էլ արագ թռու-
չելու, որ ճախրում է ծով ու ցամաքի վրայով, —
փոթորկից էլ արագ սուրալու, որ գոռում է
արտ ու դաշտի երեսին:

— Սավիտրի, հաւատարմութիւնդ շատ մեծ
է, բայց և այնպէս յետ դնա. քեզ չէ կարելի
ինձ հետեւիլ: Սակայն ես քեզ մի շնորհ կ'ա-
նեմ. խնդրիր, ինչ և կամենաս, — միայն թէ ոչ
մարդուդ կեանքը:

— Ես ինձ համար շնորհ չեմ ուզում. բայց
եթէ քեզ հաճոյ թուի խնդիրս, ես կ'աղաչեմ,
որ ծեր արքայի՝ սիրելւոյս հօր աչքի լոյսը վե-
րադարձնես:

— Լինի՛ այդպէս, ասաց Եաման: Արդ,
Սավիտրի, յետ դնա. դու յոգնած ես, իսկ
մահուան ճանապարհը տաժանելի ու եր-
կար է:

— Ո՛ր որ տանես իմ ամուսնուն, այնտեղ
է և իմ ճանապարհը. նրա և իմ շաւիղը մէկ
է. նրա կշտին ես յոգնութիւն չեմ զգալ:
Լսիր ինձ, ո՞վ մահուան թաղաւոր: Թող տուր,
որ հետեւիմ նրան. այդ ինձ պատուիրում է սէրս
և սլարտքս:

— Այդ սիրոյդ փոխարէն ես յօժար եմ
երկրորդ խնդիրդ էլ կատարել, ասաց Եաման

գորովով. ինչ և կամենաս պահանջիր, — միայն
թէ ոչ մարդուդ կեանքը:

— Յիմար մարդիկ դժնդակ և անգութ են
սնուանում քեզ, ասաց Սավիտրին. սակայն եթէ
յօժար ես, որ ես դարձեալ բան խնդրեմ, կրխնդրեմ
ոչ ինձ համար — ես ոչ մի բանի չեմ կարօտ, —
այլ ծերունի Գիումագէնա արքայի համար, որ
իւր կնոջ հետ ընկղմած է վշտերի մէջ՝ զուրկ
իւր որդու խնամող աջից: Յետ տուր նրան իւր
զահը, որ յափշտակել են չար մարդիկ:

— Այդպէս լինի, ասաց Եաման և երեսը
դարձնելով յառաջ փութաց դէպի հարաւ գու-
նատ ու լուռ ուրուականի հետ միասին: Սա-
վիտրին էլ դժգոյն ու լուռ նրանց ետեւից ըն-
թացաւ:

— Սավիտրի, ասաց լրջութեամբ մեռելնե-
րի իշխանը. զգուշացիր յանցանքից, որպէս զի
պատիժ չընդունես: Գու յանդգնում ես հակա-
ռակել ամենավեհ աստուծու կամքին, որ կեան-
քի ու մահուան թաղաւորն է: Ես այլ ևս քեզ
մի բան կըշնորհեմ, բայց միայն ոչ ամուսնուդ
կեանքը:

— Մեծ, արդար ու բարի ես դու, ո՞վ վե-
հապետ: Ասա, մի՞թէ յանցանք է իմ արածը:
Ես գալիս եմ, որովհետեւ այդ է պարտքիս պա-
տուէրը. ամուսինը պատկանում է ամուսնուն.

մի բաժանիր ինձ զրանից: Ես չունիմ ուրիշ փափաղ. սակայն եթէ անշուք ես մի բան խնդրե-
լու լինիմ, կրխնդրեմ, որ հօրս իղձը կատարուի:
Նա ուզում էր որդի ունենալ, բայց նրան աղ-
ջիկ շնորհուեցաւ: Տօւր նրան առույգ որդիք, որ
իւր ծերութեան նեցուկ լինին:

— Թող ուղածդ կատարուի, ասաց Եսման.
այժմ, Սավիտրի, չետ դարձիր: Մութն արդէն
իջնում է և սոսկալի է այս անդունդի խաւա-
րը, որի միջով անցնելու ենք: Ոտքերդ կը դալ-
թին սուլող օձերին զիպչելով. ճանապարհը
ծածկուած է կոշտ քարերով, սուր փշերով և
հրաշէկ խանձողներով: Այնտեղ քեզ հրեղէն
ալիքներ կը պատեն, և դու կը լսես արդար դա-
տաստանով պատժուածների լացն ու կոծը: Ես
ու Սատիավանին հանդարտ կ'անցնենք այն
դարհուրելի սահմանից. նա ոչ մի ցաւ չի զգալ:
Իմ ոսկեգօծ սրահների բնակիչները արդէն սպա-
սում են այս ընտրեալին: Ես տանում եմ
նրան իմ մշտաբողբոջ պարտէզը, իմ զովարար
ջրերի մօտ, ուր նա անմահական աղբիւրներից
կը ջաղեցնէ իւր ծարաւը: Իսկ դու փոխիր և
խոցս տուր այս գիշերուայ արհաւիրքից, եթէ
ոչ՝ վրէժխնդիր ծառաներս կը բռնեն քեզ:

— Պատիժը միայն մեղաւորներին համար է,
պատասխանեց Սավիտրին: Միթէ երկնաձիւր

սէր զգալը յանցանք է: Ուր էլ դնայ սիրելի
մարդս, ես պիտի նրան հետեւիմ: Ես չեմ տես-
նում անդունդների խաւարը: Հաւատարիմ սի-
րոյ համար վերջալոյս ու գիշեր չկայ. ինձ հա-
մար միշտ փայլում է արեւը, քանի որ ես սի-
րոյս շաւղով եմ ընթանում: Իմ հանգիստն այն
տեղ է, ուր որ մարդս է. իմ հոգին էլ այնտեղ
կը լինի, ուր որ նա է: Ո՛վ դու արդար հատու-
ցիչ, որ հաւաստում ես մահկանացու էակնե-
րին—հարստին աղքատ ես անում, աղքատին
հարուստ, զուարթին վիշտ ես տալիս, սգաւո-
րին՝ բերկրութիւն: Ես էլ մի սգաւոր եմ: Դու
ես կեանք առնողը, բայց դու ես և շնորհողը:
Իմ կեանքն էլ ձեռքումդ է՝ մարդուս հոգու
հետ միասին:

Մահուան իշխանի թուխ ու մռայլ գէմքի
վրայ տարօրինակ փայլ շողաց. յանկարծ նրա
աչքերը հրաշալի լուսով վառուեցան:

— Հազար հազար տարիներ ես, — որ եր-
բմն խաղաղութեան պարզելիչ էի և բարու-
թեան վարձատրիչ, — մարդկութեան մեղքերի
շնորհիւ ձիւացի ծառան դարձայ և այդ աւե-
րիչ աստծու կամքով բարիների և չարերի
դատաւոր եղայ. բայց այդպիսի խօսք ես դեռ
երբէք չէի լսած: Ո՛վ երկրածին թոյլ էակ,
դու շարժեցիր անմահի գութը. ես տեսնում եմ,

Վարդէս, Հաւատ. Սավիտրին:

որ մինչև անգամ չար ձիւփան հաշտութեամբ է վրադ նայում: Խնդրիր, և ինչ էլ դու կամենաս, կրկատարուի:

— Ուրեմն վերադարձնում ես իմ ամուսնուն, գոչեց Սավիտրին չոքելով, յետ ես տալիս սիրականիս անդին կեանքը:

— Դու ասացիր, վճռեց Եաման, իւր աջը նրա ճակատին դնելով: Դու յաղթեցիր նոյն իսկ մահուան, դու կորոցելը աստուածների հաճութիւնը, հաւատարիմ սիրովդ դու վերստացար ամուսնուդ: Քնացէք, գոհ ու զուարթ վայելեցէք ձեր կեանքը, մինչև որ այս աշխարհից յոգնելով կանչէք ինձ՝ տանելու ձեզ երանելեաց աշխարհը: Ձեր անունն անմահ կըմնայ, և ինչ էլ այսուհետեւ բանաստեղծը երգելու լինի, ձեր անունը կըլիշէ:

Աստծու ձայնը քանի զնաց սաստկացաւ. լեռներն արձագանք տուին. զետնի խորքերը, անտառներն ու դաշտերը բխրաւոր դաշնակներով նրա խօսքերը կրկնեցին, և Սավիտրին զգաց, որ մի հզօր բազուկ նրան բռնած արագ արագ բարձրանում էր... Նա ուշաթափ՝ աչքերը գոցեց:

6.

Յանկարծ նա զգաց, որ իւր ձեռը շօշափում են, որ նրան կանչում էր մի անոյշ ու

տենչալի ձայն... Նա շուրջ նայեց և իրեն յենուած տեսաւ այն ծառին, որ թողել էր մարդու ետևից վազելիս. իսկ իւր առջև չոքած դտաւ սիրելի Սատիավանին, որի աչքերը սիրալիր յառած էին նրան:

— Սավիտրի, սիրականս, քեզ մօտ եմ արդեօք, հարցրեց Սատիավանը: Այս ինչ զարմանալի երազ էր: Ես տեսայ Եամային, այն մաւշլին. միթէ դու էլ չտեսար նրան: Արդեօք դու ինձ փրկեցիր:

Սավիտրին բռնեց նրա ձեռը. էլ չէր կարող բան ասել. Սատիավանը փրկուած էր, ապրում էր...

— Վեր կաց, ով սիրելիս, ասաց վերջապէս Սավիտրին. դու շատ երկար քնեցիր: Ծերունի հայրդ ու մայրդ կարօտով սպասում են քեզ: Մեզ պատահած դէպքի մասին յետոյ կըխօսենք:

— Այո, շտապենք, գոչեց Սատիավանը: Սակայն այս ինչ է, ես թմբրած եմ և հազիւ եմ կանդնում ոտքերիս վրայ...

— Յենուելի ինձ, դու յոգնած ես սաստիկ ցաւից: Տապարդ ու սուրդ ես կըվերցնեմ, և լուսնեակը լոյս կըտայ մեզ ճանապարհին:

Սավիտրին ուժասպառ՝ մարդու թևից բռնելով տարաւ նրան դէպի տուն: Նա ինքն

յողնութիւն կամ թուրութիւն չէր զգում. նա փրկել էր իւր մարդուն:

Սատիավանը լուռ ու մունջ յառաջ էր գնում կնոջ կողքին. նրա թմբբութիւնը շուտով անցաւ: Վերջապէս նրանք հասան այնտեղ, ուր որ կանգնած էր խոնարհ տնակը, և երկուսն էլ դարմացան, որ այդ տնակը այժմ շքեղ զարդարուած էր: Ալեւոր Գիումաղէնան կանգնած էր դռան առջև: Դրա ոտքերի տակ չոքած էին պճնազղեոտ պատանիներ, պատկառելի ծերուկներ, և նրա առջև մի թագ բռնած գոչում էին.— Վերադարձիր քո երկիրը, հով արքայ. մենք շատ երկար չարչարուեցանք բռնակալի լուծի տակ. այժմ նրա իշխանութիւնը վերջացաւ, ինքն էլ դահից զլորուած է: Ե՛կ, վերստին ձեռքդ առ, ինչ որ քեզ է պատկանում: Դո՛ւ ես մեր թագաւորը:

— Կեցցէ՛ մեր տէրը, որոտացին ամեն կողմից, հրբոր Գիումաղէնան թագն ընդունեց: Այդ իսկ միջոցին նրան մօտեցան Սատիավանն ու Սափիտին. ծեր արքայի աչքերը խնդութեան հրով վառուեցան:

— Որդեակ իմ, գոչեց նա, լաւ ժամանակ ես տուն գալիս: Այս օր աստուածները փրկութիւն շնորհեցին մեզ: Խաւար պատեանն իմ աչքերից վալը ընկաւ, ես կոյր չեմ ալ ևս, և

ահա քեզ էլ եմ տեսնում, հով տեսչալի դստրիկ իմ, ում որ անքան կարօտել էի: Վեր կացէք, հով մտերիմներ. տեսէք— ահա սրանք են ձեր թագաւորն ու թագուհին, գոչեց նա ցոյց տալով իւր որդու և հարսի վրայ: Սրանք երկուսն էլ թագ կրելու արժանի են: Իսկ մենք ծերերս՝ ես ու կինս այս մենաստանում կրմնանք: Կեանքի ուրախ վայելքները մեզ ալ ևս չեն հրապուրում. այսուհետեւ զառամեալ աջս չէ կարող ամուր բռնել պետութեան ղեկը: Գնա՛, որդեակ, կնոջդ հետ քո հայրենի աշխարհը. մենք էլ ձեր բախտով երջանիկ կըլինինք:

— Կեցցէ՛ մեր նոր թագաւորը, աղաղակեց բազմութիւնը:

Սատիավանն ընդունեց թագն իւր հօր ձեռքից և դարձեալ կնոջը նայեց:

— Այս քո գործն է, հով հաւատարիմ ու սիրելի կին, ասաց նա: Իմ տեսածն երազ չէր. ես քեզ եմ պարտական իմ կեանքն ու թագը. հայրս էլ քո շնորհիւ լիտ ստացաւ աչքի լոյսը. ասո՛ւ ուրեմն, ի՜նչ կերպով շնորհակալ լինիմ քեզ:

— Ոչ թէ ինձ, ալ աստուածներին շնորհակալ եղիր, պատասխանեց քնքուշ ձայնով Սափիտին. մինչև անգամ նոյն իսկ մահուան իշխանը բարեսէր ու գթած է: Նրանք

իմ խնդրանօք հօրս էլ պարզեցին, ինչ որ
վաղուց փափագում էր. նրա ծերութիւնն այ-
սուհետեւ նորափթիթ զաւակներով կըսփոփուի.
այդպէս աւետեց ինձ Եաման: Սրտիս բոլոր իղ-
ձերը կատարուած են: Ե՛կ ուրեմն ծունր չո-
քած փառք տանք հօր աստուածներին, ո-
րոնց անսպառ բարութեամբ լի է ամբողջ տի-
եղերքը:

1526
1527
1528
1529

2013

31. ԿՈՄՍ Լ. ՏՕԼՍՕՅ, Աստուած գիտէ՝ ով	Ռ. Կ.
է արդարը.	— 7
32. ՎԱԼԴԵԿԻ, Հաւատարիմ Սավիտրին, գերմ.	
Թարգմ. Պ. Վարդանեան	— 10

Նոյն տեղում փոփոխուած են նաեւ Բնկերութեան
նիւոնեակ գրքերը

ԵՉ

1. Ուսումնարանների առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բաբայեանի	1 —
2. Կրքեր և նոցա ազդեցութիւնը առող- ջութեան վրայ, բժ. Ա. Բաբայեանի.	— 30
3. Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի.	2 —
4. Թորոս Լեոնի, Ծերենցի.	1 —
5. Թէոդորոս Ռչաունի, Ծերենցի.	1 —
6. Երկունք Թ. զարու, Ծերենցի.	1 —

Մ ա մ ու լ ի տ ա կ ե ն՝

ՀԵՆՐԻԽ ՊԵՏՏԱԼՈՅԻ, Լինհարդ և Գերտրուդ
ՄԱՔՍ ՌՈԶԷՆՔԱՅՆ, Նաւի փոքրաւորը:

ԳԻՆՆ ԷՉ ԿՈՊ.